

Համբուրիք ինձ ու...

Չեմ մեռնի ես էլ:

Տես, ցեցն ու ժանգը կերել են արդեն
 դիզած գանձերս՝
 սիրուն շորերս, փայլուն զարդերս,
 խելոք գրքերս,
 և գողը պատը ծակել է, տարել փողերս
 բոլոր,
 բայց քո համբույրը չի ժանգի երբեք,
 բայց քո համբույրը կծակի պատը
 չինականթախծի...
 Ես իմ բերանով քեզ կմոտենամ
 և իմ շրթունքով կպատվեմ ես քեզ,
 խուզարկու լեզվով ես կլրտեսեմ
 մարմինդ համակ
 և կպրպտեմ և կկրկտեմ փեթակը մեղրի:

Ա~խ, ինչ համով են, ինչ զգայնոտիկ
 շուրթերը յարոջ,
 ինքնավար լեզուն ժիր նվագում է իմ
 ասամներին՝
 վարժ, ինչպես ճերմակ ստեղնաշարի:
 Ի՞նչ անեմ, մամա՛,
 ընդառաջ գնա՛մ սիրո ներթաքույց միակ
 խոստումին,
 հպվե՛մ մատների տաք թմբիկներով,
 լեզվի փշփուշով խուտուտե՛մ տամուկ,
 շոյեմ-փաղաքշե՛մ ցողունը վերձիգ
 և հյուրընկալե՛մ սիրո ճամբարում...
 Ձրի եմ առել, ձրի էլ կտամ մարմինն այս
 նվեր,
 որ ինձ փայ հասավ, որ շահեցի հեշտ
 այն վերաշխարհիկ վիճակախաղում
 (հափչի՛, էսքան ճիշտ):
 Դե, միջնամատով թակիր դուռը գոց
 շարժական գույքիս,
 հանիր բառերի սեղմ հանդերձանքը,
 մորեմերկ սրտով մտիր իմ կայքը
 և խարխիս նետիր ծովածոցիս մեջ...
 Ես քեզ կողողեմ ներսիս ջրերով
 և թեժ արգանդիս ծորուն մյուռոնով քեզ
 կակրտեմ-
 կնքված ես արդեն և դավանորդն իմ:

Աղվեսները, հա, որջեր ունեն միշտ,
 երկնքի բոլոր թռչունները՝ բույն,
 քո որջն ու բույնը ես եմ, մարմինս,
 եկ ու բնակվիր իմ մեջ, սիրելիս,

Embrasse-moi, car

Moi non plus je ne mourrai pas.

Vois comme les mites et la rouille ont attaqué mes
 trésors :
 Mes belles parures, mes bijoux scintillants,
 mes livres de sagesse.
 Quant au voleur, il a percé le mur et emporté tout mon
 argent.
 Mais ton baiser, jamais il ne rouille.
 Mais ton baiser, il perce
 la muraille de Chine des mélancolies.
 Avec ma bouche je m'approcherai de toi.
 Avec mes lèvres, je saurai t'honorer.
 Avec ma langue fureteuse, j'espionnerai ton corps
 entier,
 Cherchant avec frénésie le rayon de miel.

Dieu qu'elles sont bonnes les lèvres sensibles de mon
 bien-aimé !
 Bonne sa langue frénétique qui joue sur mes dents,
 Habile, comme sur les touches blanches d'un clavier !
 Que faire d'autre, maman ?
 Sinon d'aller au-devant de cette promesse cachée
 d'amour ?
 Sinon toucher de mes doigts ce brûlant tambourin ?
 Le titiller des torsions de ma langue humide ?
 Caresser la tige qui se dresse
 Et l'inviter dans le camp de l'amour ?
 Ce corps gracieusement obtenu, à mon tour
 je l'offre gracieusement.
 Ce corps gagné sans mal dans une loterie d'outre-
 monde.
 (Ne t'étonne pas, c'est vrai).
 De ton médium toque à la porte close de mon bien qui
 palpète.
 Ôte les vêtements qui ensèrent les mots.
 D'un cœur simple pénètre dans mon port
 Et jette l'ancre au fond de ma baie.
 Je t'inonderai de mes eaux intérieures.
 Je te baptiserai avec les saintes huiles de ma chaude
 matrice.
 Béni sois-tu mon confesseur !
 Si les renards ont leur tanière,
 Les oiseaux du ciel tous un nid,
 Toi, pour tanière et pour nid, tu as mon corps.
 Viens, habite en moi, mon amour !

քաղցր է քո լուծը, և բեռդ՝ թեթև:
 Ելի՛ր մահի՛ճս՝ ասես ամբիոն,
 և ճառի՛ր ճարտար մարմնի վանկերով,
 մարմնի հոլովով,
 մարմնի բառերով,
 խոսքով մարմննի,
 ասումնքի՛ր ասքը սիրո և կրքի
 արշավանքների,
 խնդրի՛ր՝ կտրվի,
 բախի՛ր՝ կբացվի,
 թեպետ նեղ դուռ է, անձուկ ճանապարհ,
 բայց, հու՛շ, անկողնում կանչողի ձայնն է՝
 պատրաստել եմ ես քո ճանապարհը
 և հարթել բոլոր շավիղները քո...
 Դե, վարի՛ր կառքը մկանակառույց,
 կառա վարի՛ր ինձ,
 բարակ, կաշվեհյուս, բարակ, նրբահյուս,
 բարակ մտրակով
 ուղղորդի՛ր խրտնած ընթացքը կրքի,
 կոնքերի՛ս դաջի՛ր գոլ-գոլ նշանդ
 և դրոշակդ ծածանի՛ր վրաս:

Ես վայրի ջուր եմ,
 ես խիտ ողկույզ եմ,
 ես փուխր օդ եմ.
 մտի՛ր իմ հունը,
 թաքնվի՛ր իմ մեջ,
 և ներշնչի՛ր ինձ և արտաշնչի՛ր
 և ներշնչի՛ր ինձ և արտաշնչի՛ր
 և ներշնչի՛ր ինձ և արտաշնչի՛ր
 խոր ներշնչի՛ր ինձ, ա~խ,
 արտաշնչի՛ր,
 ա~խ, արտաշնչի՛ր...

Ինչ հաճելի է քեզ ներընկալել, իմ սիրո
 մարզիչ, առույզ բարձրնկեր,
 չկա կանանցից ծնվածների մեջ լավը
 քեզանից...
 Եվ երանի է իմ որովայնին, որ
 փշաքաղվեց լեզվիդ հպումից,
 եւ երանի է իմ ստինքներին, որ ծառս են
 եղել լեզվիդ հպումից,
 երանի է ինձ՝ տիրոջ աղախնիս, որ
 օրհնյալ եղա այսքան կանանց մեջ...

Մամ, մի բարկանա,
 տես, ինչ առողջ եմ,
 տես, ոնց եմ կոփվել սիրո մարզանքում,
 տես, սիրտս ուրախ, լեզուս ցնծուն է,

Doux est ton joug, léger ton poids.
 Monte sur ma couche, qui est comme une chaire,
 Et plaide en expert avec les syllabes du corps,
 Avec les déclinaisons du corps,
 Les mots du corps.
 Avec leur aide,
 Déclame la saga de la passion.
 Réclame ! Et l'on te donnera.
 Frappe ! Et l'on t'ouvrira.
 Même si la porte est étroite et la voie encaissée.
 Car moi, j'ai préparé ta route.
 Pour toi, j'ai aplani le sentier.
 Conduis le char tissé de mes muscles ! Gouverne-moi.
 De ta tendre cravache aux fibres délicates !
 Oriente le cours farouche de la passion !
 Imprime sur mon bassin le signe de tes raies
 Pour que flotte sur moi ton drapeau !

Car je suis eau sauvage.
 Grappe aux grains serrés.
 Air friable.
 Dans mon lit entre,
 Viens en moi te cacher.
 Inspire-moi ! Expire !
 Inspire-moi ! Expire !
 Inspire-moi ! Expire !
 Profondément inspire-moi ! Ah ! Expire !

Ah ! Expire !

Comme il me plaît de t'absorber, mon bel instructeur,
 vif ami d'oreiller.
 Pas de femme au monde qui soit meilleure que toi.
 Bienheureux mon ventre qui picota au passage de ta
 langue.
 Bienheureux mes seins qui se dressèrent
 au passage de ta langue.
 Bienheureuse je suis, servante de mon maître,
 d'avoir été bénie entre toutes les femmes.

Mère, ne te mets pas en colère.
 Vois comme ma santé est bonne.
 Vois comme l'exercice d'amour m'a durcie.
 Mon cœur exulte et ma langue chante.

Էւ իմ մարմինը հույսով է ապրում,
 քանզի իմ անձը սիրո վայրում է...
 Ով տեսնելու աչք ունի, թող նայի,
 ինչ թովիչ նկար-
 գույգ գող մարմինը՝ սավանին սփյուռ՝
 հյուսված ծաղկեփունջ, ամեհի
 շուշան,
 ուստրե բացուխուփ, տարուբեր ճոճան...
 Ճոճիր մակույկս, իմ կայտառ քամի,
 զվարթ գործընկեր,
 ճոճիր մակույկս, ընտիր թիավար,
 խելառ ծովահեն,
 ճոճիր ինձ, մինչեւ իսպառ սպառվեմ,
 մինչեւ վերջանամ ինքս ինձանից,
 մինչեւ ինձանից ինքս դադարեմ,
 ճոճիր ինձ այնքան, մինչեւ որ հասնեմ
 այնտեղ՝ ՈՉ ՄԻ Տեղ –
 ափ երանության...

Այդպես քայլ առ քայլ, այդպես բառ առ
 բառ,
 դետալ առ դետալ, կանգառ առ կանգառ
 ինձ քիփ ուղեկցիր իմ իսկ մարմնի
 լաբիրինթոսում
 ու պաշիկ-պաշիկ, շարժում առ շարժում,
 ու պաշիկ-պաշիկ, հնչյուն առ հնչյուն
 ու պաշիկ-պաշիկ
 ինձ տար անցկացրու իմ մարմնի շեմից,
 ինձ տար հասցրու ուրախության տուն...
 Ըհը, մի քայլ էլ, ըհը, մի շարժում –
 Ճերմակ սավանին, ասես ճերմակ
 թուղթ,
 երկու տող մարմնի շարահյուսությամբ
 գրված երկու խոսք՝

«Եվ կատարված է»:

Mon corps vit d'espoir,
 Tandis que tout mon être est dans le lieu d'amour.
 Qu'il voie celui qui a des yeux !
 Quelle ravissante image !
 Deux corps soudés, étendus sous le drap, un entrelacs
 De fleurs, lys frénétiques, huître qui s'ouvre et se
 referme,
 balançoire qui va et qui vient...
 Fais balancer ma couche, toi mon vent vigoureux,
 mon joyeux compagnon de travail.
 Fais osciller ma couche, toi mon rameur de choix,
 mon corsaire fou.
 Remue-moi jusqu'à ce que je sois toute épuisée.
 Jusqu'à ce que j'atteigne par moi-même l'extrémité
 de ma personne.
 Jusqu'à ce que par moi-même je m'anéantisse.
 Remue-moi au point que j'atteigne là-bas ce NULLE-
 Part
 – rivage de la joie.

Ainsi, pas à pas, d'un mot l'autre,
 D'un mouvement l'autre, d'une pause à une autre
 pause,
 Tiens-moi serrée et conduis-moi au cœur même de
 mon labyrinthe !
 Et d'un baiser l'autre, d'un mouvement à un autre
 mouvement,
 D'un baiser l'autre, d'un son de voix à un autre son de
 voix,
 D'un baiser l'autre,
 Fais-moi franchir le seuil de mon propre corps !
 Fais-moi entrer dans la demeure de toute joie...
 Ah ! Un pas encore. Ah ! Encore un mouvement.
 Et sur le drap blanc, blanc comme du papier, deux
 lignes écrites
 Selon le phrasé du corps, ces trois mots:

«Tout est accompli.»